Հավելված N 2
2025 թվականի հունվարի 15-ին կնքված
1032-11002/2025-ԿԱ1 պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 15. Կոտայք – 1 (Չարենցավան, Հրազդան) |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025-31.12.2025թթ. |
| Ներկայացման օր | 17.12.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Հասմիկ Մանուկյան<br>Թիմ լիդեր |

2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել Հրազդան համայնքում 33, իսկ Չարենցավան համայնքում՝ 18 շահառուի: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 15 դեպքի վարում՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում վերափաստագրման կազմակերպում 5 անձի համար, մեկանգամյա տրամադրվող սննդային քարտի ստացման կազմակերպում 1 անձի համար, ԱՖԳ կազմակերպում 1 անձի համար, եռամսյակային հրատապ աջակցության ստացման կազմակերպում նոտարի կողմից տրված լիազորագրով 1 անձի համար, քայլակի ստացում 1 անձի համար, սննդային աջակցության կազմակերպում համայնքապետարանից 2 անձի համար, նոր անձնագրի ստացում 1 անձի համար, կենսաթոշակի ստացման կանխիկ եղանակի փոփոխություն անկանխիկի 3 անձի համար:
  **Խորհրդատվական աջակցության շրջանակներում** շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
  Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում Հրազդանի կենտրոնում կազմակերպվել է 3 միջոցառում՝ «Տարեցների միջազգային օր», «Ծառերը կանգնած են մահանում» ներկայացման դիտում, «Նոր Տարի», որոնց մասնակցել է տնային սպասարկման 4 շահառու:
- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել Հրազդան համայնքում 33, իսկ Չարենցավան համայնքում 18 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել Հրազդան համայնքում 33, իսկ Չարենցավան համայնքում 18 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող Հրազդան համայնքում 12, իսկ Չարենցավան համայնքում 14 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք, 3 շահառու ուղեկցվել է բժշկական

հաստատություն՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցրվել է բժշկական քարտից քաղվածք, 9 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 2 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ, 4 շահառուի համար վերցրվել է վերջինիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին, 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել են հետևյալ նյութերը՝
https://surl.li/gatdhl
https://surl.li/onyxsi

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կենցաղային սպասարկում և խնամք,
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով Հրազդանի ցերեկային կենտրոնի համակարգողի և Չարենցավանի կենտրոնի համակարգողի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
Հրազդան կենտրոնի 5 աշխատակիցներ և Չարենցավան կենտրոնի 3 աշխատակիցներ մասնակցել են PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտոցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում, ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
Հրազդան կենտրոնի համակարգողը եւ հոգեբանը հաջողությամբ ավարտել են «LHS – ARISE առողջապահական համակարգերի ուսուցում՝ առողջ ծերացումը խթանելու համար» մասսայական բաց առցանց դասընթացը:
Հրազդանի կենտրոնի համակարգողը մասնակցել է Հրազդանի համայնքապետարանում խնամակալության եւ հոգաբարձության 8 նիստի, ՄՍԾՏկ-ում Կարմիր Խաչ կազմակերպության կողմից

կազմակերպված առկա ծրագրերի վերաբերյալ իրազեկող հանդիպմանը, Հրազդանի համայնքապետարանում Կանանց ռեսուրս կենտրոնի կողմից կազմակերպված բռնության վերաբերյալ իրազեկող հանդիպմանը, Կանանց ռեսուրս կենտրոնում կազմակերպված «Հայաստան-Եվրոպական միություն՝ համապարփակ եւ ընդլայնված գործընկերային համաձայնագիր, մշտադիտարկում, ջատագովություն, հաղորդակցում» հանդիպմանը, Կոտայքի մարզպետարանում «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կողմից կազմակերպված «Քաղաքացիություն չունեցող անձիք» խորագրով հանդիպմանը: Առցանց մասնակցել է Բիշքեքում տեղի ունեցած միջազգային կոնֆերանսին եւ ներկայացրել կազմակերպության գործունեությունը միջազգային հարթակում:

Չարենցավանի կենտրոնի համակարգողը հանդիպումներ է ունեցել ՄՍԾ Չարենցավանի ՏԿ պետի և ընդունարանի աշխատակիցների հետ անապահովության գնահատման նոր համակարգի վերաբերյալ և համակարգից դուրս մնացած շահառուներին աջակցելու նպատակով, բարեգործական ճաշարանի ծառայությունների կարիքն ունեցող անձանց հերթագրման գործընթացի, տեղաշարժման դժվարություններ ունեցող շահառուներին կենսաթոշակի վճարման կանխիկ եղանակից անկանխիկի փոխելու գործընացում առկա դժվարությունների, դրանց լուծման հնարավոր տարբերակների գործարկման վերաբերյալ: Հանդիպում է ունեցել համայնքապետարանի սոցիալական աշխատողների հետ՝ աջակցության կարիք ունեցող շահառուների համար աջակցություն կազմակերպելու համար:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 52/50 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 42 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 12 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 9 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 12 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 38 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա –10<br>Բ – 40 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 52 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 52 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 52 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 4 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 11 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) | |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «17» 12. 2025թ

(ստորագրություն, անուն,ազգանուն)